

Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանը հայտարարում է մարզպետարանում քաղաքացիական ծառայության հետևյալ ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու մասին

ՀՀ Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ (ծածկագիր՝65-2.2-10)

Հիմնական գործառնությունները՝

ապահովում է հողաշինության և հողօգտագործման բնագավառում մարզպետին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացումը և այդ բնագավառում մարզպետի գործունեության օպերատիվությունն ու արդյունավետությունը, ներկայացնում է մարզպետարանի աշխատանքային ծրագրի հողաշինության և հողօգտագործման հատվածի նախագիծը և Բաժնի աշխատանքային ծրագրերը, գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է Բաժնի առջև դրված գործառնություններից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր նախապատրաստելը, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր մշակելը, գլխավոր քարտուղարին ներկայացնում է առաջարկություններ՝ Բաժնի աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար, իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է

բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն երկրորդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում:

-սույն պաշտոնի հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն

-համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

-անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում

Դիմող ՀՀ քաղաքացիները Լոռու Մարզպետարան անձամբ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

-գրավոր դիմում (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)

-կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները,

աշխատանքային գրքույկի պատճենը,

-արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք

-մեկ գունավոր լուսանկար՝ 3X4 սմ չափսի

-անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը

Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը ընտրությունը կատարում է դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրության եղանակով:

Պայմանագրի գործողության ժամկետն է՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում պաշտոն զբաղեցնելը:

Աշխատավարձի չափը՝ 256623 ՀՀ դրամ:

Աշխատանքի վայրը՝ ՀՀ Լոռու մարզպետարան, ք. Վանաձոր, Հայքի հրապարակ, 1

Փաստաթղթերն ընդունվում են՝ ա/թ սեպտեմբերի 18-ից, ժամը 9:30-ից մինչև 12:30-ը:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 20.09.2019թ. ժամը 12.30-ը:

ՀՀ Լոռու մարզպետարանում ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող եք դիմել ՀՀ Լոռու մարզպետարան (ք. Վանաձոր, Հայքի հրապարակ, հեռ.2-10-24)